ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 215

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «ԳԻՍ-ԱՐՏ » ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև քաղ. Անահիտ Կարապետյանի կողմից ներկայացրած դիմումը՝ **որոշում եմ.**

1. Թույլատրել քաղ. Անահիտ Կարապետյանին, Խաչատուր Կարապետյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 4 հասցեում գտնվող 475.2 քմ բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասը և դրա վրա գտնվող շինությունները բաժանել 2 մասի՝ S1- 155.5 քմ և S2-319.7քմ:
2. Հողամասի S1-155.5 քմ հատվածին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 4/1, իսկ S2 - 319.7 քմ հատվածի հողամասին և դրա վրա առկա շինությանը հասցեն թողնել՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 1-ին փողոց թիվ 4:
3. Սույն որոշումն ուժի մեջ է գտնվում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 19 թ. դեկտեմբերի 24
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 216

ԱՐԱՐԱՏ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Արարատ Բեգլարյանի դիմումը ՝ **որոշում եմ**

1. Արարատ Բեգլարյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամեջ հողամասում բնակելի տան և պարիսպապատման կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Արարատ Բեգլարյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ.դեկտեմբերի27
գ.Վերին Պտղնի